

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՍՓԻՒՔԻ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԲԵՐԵԱԼ

ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի Հանրային Կապի Յանձնախմբի կազմակերպութեամբ, Ուրբաթ, Օգոստոսի 15-ի երեկոյեան ժամը 7:15-ին, Գլենդէլի Հանրային գրադարանի հանդիսասրահում տեղի ունեցաւ հրապարակային քննարկում՝ Հայաստանում նոր ստեղծուելիք Սփիւռքի հարցերի նախարարութեան մասին: Միջոցառմանը ներկայ էին համայնքիս ակելի քան 200 անդամներ, որոնց թւում հայկական կազմակերպութիւնների, մամուլի եւ հեռուստածրագրերի ներկայացուցիչներ:

Ձեռնարկը բացուած յայտարարեց Հանրային Կապի գրասենեակի պատասխանատու՝ Սարօ Նազարեանը, որը ողջունելով եւ շնորհակալութիւն յայտնելով ներկաներին, յատկանշեց այն հանգամանքը, որ լոսանջելոսահայութիւնը հանդիսանալով Սփիւռքի խոշորագոյն գաղթօջախներից մէկը իր կարելոր ներդումը եւ տեսակէտները պիտի ունենայ Հոկտեմբերին կեանքի կոչուելիք Սփիւռքի նախարարութիւնում: Ահա թէ ինչու,- ասաց նա,- Հանրային Կապի Յանձնախումբը որոշեց կազմակերպել սոյն հանդիպումը: Այնուհետեւ նա բեմ հրաւիրեց ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի մօտ հանրային կապի հարցերով պատասխանատու ժան Գոսագեանին, որը իբրեւ նախաբան, ընդհանուր վերաբերուում կատարեց Սփիւռքի ներկայիս իրավիճակի մասին, ներկայացնելով հայութեան տարաբնակութիւնը եւ համեմատական թիւը Սփիւռքի զանազան երկրներում: Նա մասնաւորաբար ծանրացաւ լեզուական, արտայայտչական, ուղղագրական եւ կենցաղային այն տարբերութիւնների վրայ, որոնք առկայ են Սփիւռքի տարածքով մէկ եւ հաւանաբար կը հանդիսանան Սփիւռքի նախարարութեան դիմագրաւելիք հիմնահարցերից մէկը:

Այնուհետեւ բեմ հրաւիրուեցին օրուայ զեկուցաբերներ՝ ակադեմիկոս Աշոտ Կարապետեանը, պատմագիտութեան դոկտոր Կարօ Մոմճեանը, քաղաքական գիտութիւնների դոկտոր Ռազմիկ Շիրիմեանը եւ «Հերթափոխ» հեռուստածրագրի հաղորդավար Արմէն Դիլանեանը, ովքեր ներկայացրեցին իրենց տեսակէտներն ու կարծիքները Սփիւռքի հարցերի նախարարութեան վերաբերեալ: Յատկանշելի է, որ հրաւիրուած զեկուցաբերներից «Արմինիըն Արզըրվըր» անգլատառ շաբաթաթերթի գլխաւոր խմբագիր Օշին Քեշիշեանը յարգի պատճառով չկարողացաւ ներկայ գտնուել քննարկմանը:

Նախ ելոյթ ունցաւ դոկտոր Կարօ Մոմճեանը, որը խօսելով Սփիւռքի հարցերի նախարարութեան նպատակի մասին, նշեց, որ նախարարութիւնը պէտք է աշխատանք տանի արտերկրի հայութեանը Հայաստանին կապելու եւ միեւնոյն ժամանակ արտերկրի բաժան-բաժան գաղութների հայութեանը միացնելու ուղղութեամբ: «Տարիներու ընթացքին մենք՝ արտերկրի հայութիւնս կոտորտուած գաղութների վերածուած, որ միայն տեղական հարցերով կը զբաղէինք, հիմնական՝ համահայկական հարցերով ընդհանրապէս չենք զբաղուած, որովհետեւ մեր կարողութենէն դուրս էր այդ մէկը եւ նաեւ անկախ հայրենիք ալ չկար ամբողջական իմաստով, որ այդ ուղղութեամբ մտածէինք», - նշեց Կարօ Մոմճեանը եւ կարելորեց այն հանգամանքը, որ Սփիւռքի հարցերի նախարարութիւնը պէտք է ծրագրային հեռանկար ունենայ, այսինքն պէտք է որոշի, թէ ի՞նչ գործ կարող է անել եւ որչափո՞վ կարող է անել: Խօսելով

ճախարարութեան կազմակերպչական հարցերին, նա նշեց, որ Սփիւռքի ճախարարութիւնը պէտք է հանդէս գայ նոր ձեւաչափով, քանի որ այդ կարգի ճախարարութիւն աշխարհում համեա թէ չկայ:

Ակադեմիկոս Աշոտ Կարապետեանը անդրադառնալով նոր ստեղծուիլք Սփիւռքի ճախարարութեան կազմութեանը եւ իր առջեւ դրուելիք առաջադրանքների իրագործմանը յայտնեց, թէ ճախարարութիւնը չպէտք է միայն դեկավարուի Զայաստում հաստատուած անձանց կողմից, այլ զգալի տոկոսով պէտք է հենուի արտասահմանում՝ Սփիւռքում ապրող եւ աշխատող կարող ուժերի վրայ: Ակադեմիկոս Կարապետեանի համաձայն, այս ճախարարութիւնը իր կառոյցով պէտք է տարբերուի Զայաստանի բոլոր ճախարարութիւններից նրանով, որ Զայաստանի ճախարարութիւնները զբաղւում են Զայաստանի գործերի կամ խնդիրների կառավարմամբ, մինչդեռ Սփիւռքի ճախարարութիւնը պէտք է զբաղուի արտերկրի հայութեան հարցերով:

Դոկտոր Ռազմիկ Շիրինեանը երեք առաքելութիւններ յատկանշեց Սփիւռքի ճախարարութեան համար: Այն պէտք է Սփիւռքը եւ սփիւռքահային կապի իրական Զայաստանի, այլ ոչ թէ երեւակայական Զայաստանի հետ, որը,- նշեց նա,- մենք տարիներ շարունակ պատկերացրել ենք Սփիւռքում: Երկրորդ առաքելութիւնը վերաբերում է Սփիւռքի ինքնուրոյն եւ ինքնիշխան զարգացմանը աւելի կազմապերուած ուղղութիւն տալուն: «Սփիւռքը զարգացման ընթացքի մէջ է, բայց կազմակերպուած զարգացում չէ եւ ես կը յուսամ, որ այս ճախարարութիւնը այդ կազմակերպուած դրութիւնը կ'ստեղծէ Սփիւռքի քաղաքական, ընկերային, տնտեսական, զարգացման ընթացքին մէջ», - նշեց Ռազմիկ Շիրինեանը, աւելացնելով, որ Սփիւռքի ճախարարութեան երրորդ առաքելութիւնը պայմանաւորում է նրանով, որ միջազգային, դիւանագիտական ցանցում հայ ժողովուրդը հազարաւոր հայերի պէտք ունի, որը Սփիւռքը կարող է հայթայթել, սակայն չի կարող կազմակերպել, հետեւաբար ճախարարութիւնը կարելոր դեր ունի կատարելիք այս հարցում:

«Յերթափոխ» հեուստածրագրի հաղորդավար Արմէն Դիլանեանը անդրադառնալով Սփիւռքի հարցերի ճախարարութեան անելիքներին, նշեց, որ Սփիւռքը արդէն իսկ ներգրաււած է հայրենիքի տնտեսական, քաղաքական կեանքում: Յետեւաբար հարց է առաջանում, թէ ի՞նչ պէտք է լինի Սփիւռքի հարցերի ճախարարութեան գործունէութեան դաշտը,- նշեց Արմէն Դիլանեանը տեսակէտ յայտնելով, որ աւելի շուտ անհրաժեշտ է նկատւում այդ հարցերի առաւել արդիւնաւէտ համակարգումը քան թէ յատուկ ճախարարութեան ստեղծումը: Իսկ անդրադառնալով Զայաստանի ու Սփիւռքի միջեւ կապերի փոխազդեցութեանը Արմէն Դիլանեանն ասաց. «Սփիւռք-Զայաստան յարաբերութիւնը, եթէ մենք խօսում ենք քաղաքական ազդեցութեան մասին, չի կարող լինել միակողմանի երթելեկութեան փողոց: Եթէ Սփիւռքը իրաւունք ունի ազդելու Զայաստանի քաղաքականութեան վրայ, նոյնչափ Զայաստանը պէտք է իրաւունք ունենայ ազդելու Սփիւռքտ վրայ, քաղաքական առումով: Արդե՞օք դա հնարաւոր է այսօր պատկերացնել: Ես յոռետես եմ: Չեմ հաւատում, որ դա այսօր հնարաւոր կը լինի անել»:

Ձեկուցաբերների ելոյթներից յետոյ, առիթ տրուեց ներկաներին եւ կազմակերպութիւնների ներկայացուցիչներին արտայայտուելու եւ իրենց տեսակէտները յայտնելու Սփիւռքի ճախարարութեան մասին: Ելոյթներ ունեցան «ՅԱՍԿ», «Արփա», «Արեւմտեան Զայաստանի պաշտպանութեան

խորհուրդ » կազմակերպութիւնների, «Չայրենիք» միութեան, «Լոյս» հեռուստատօրագրի ներկայացուցիչները եւ այլ մասնակցիներ:

Փակման խօսքով հանդէս եկաւ ժան Գոսագեանը, որը յայտնեց, թէ Չանրային Կապի Յանձնախումբը ընթացք տալով ներկաների կողմից դրսեւորուած բուռն ցանկութեան եւ հետաքրքրութեան, որոշել է առաջիկայ ամիսներին դարձեալ կազմակերպել նման հանդիպումներ, ուր կը հրաւիրուեն եւ ելոյթներ կունենան նաեւ հայկական զանգուածային լրատուամիջոցների ներկայացուցիչներ եւ լրագրողներ:

Յայտնենք, որ միջոցառումը պատկերասփռուելու է «Չորիզոն» հեռուստատեսութեամբ ներկայացուող Չանրային Կապի յանձնախմբի «Կողմնացոյց» ծրագրով, իսկ զեկուցաբերների ելոյթները ամբողջութեամբ կարելի է լսել այցելելով ՉՅԴ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի կայքէջը՝ www.ARF1890.com հասցեով:

Միջոցառումը փակ յայտարարուեց երեկոյեան ժամը 9:20-ին:

ՉՅԴ Արեւմտեան Ամերիկայի
Կենտրոնական Կոմիտէի
Չանրային Կապի Գրասենեակ
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations@ARF1890.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467